# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 247 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 123-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի մարտի 11-ի «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Համագումարների կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N 123-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Իֆէկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00081666) 2024 թվականի մարտի 19-ին կնքված՝ N 034/2024 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լվացքի մեքենայի, չորանոցի և ինդուստրիալ արդուկի մատակարարում՝ 13,010,379 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2024 թվականի մարտի 19-ին կնքված՝ N 033/2024 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնի վնասված ապակեփաթեթների ապամոնտաժման, պատրաստման, մոնտաժման և

հյուրանոցային սենյակների դռների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 21,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Թերմոոոս Արմենիա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 02829442) հետ 2024 թվականի մարտի 20-ին կնքված՝ N 035/2024 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնի օդափոխության ջեռուցման, հովացման համակարգերի և կաթսայատան առկա թերությունների վերացման աշխատանքների իրականացում՝ 7,390,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

09.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ